

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԻՄՈՒՆԵՐԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *

ՀՏԴ 338.2

DOI: 10.52063/25792652-2023.2.17-183

ԳԱՐՐԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության
կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների
ֆակուլտետի բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

gasparyan.garry@mail.ru

ORCID: 0000-0002-3939-9341

Հոդվածում նպատակ է դրվել բացահայտել շրջակա միջավայրի
պահպանության բնագավառում կիրառվող տնտեսական կառուցակարգի
տեսական հիմնադրույթներն ու առանձնահատկությունները՝
գիտատեղեկատվական հիմք ստեղծելով Հայաստանում շրջակա միջավայրի,
մասնավորապես՝ մթնոլորտային օդի պահպանության տնտեսական
կառուցակարգի կատարելագործման ու զարգացման համար:

Առաջադրված նպատակի իրագործման համար խնդիր է դրվել
ուսումնասիրել շրջակա միջավայրի պահպանության բնագավառում
տնտեսական կառուցակարգի կիրառման անհրաժեշտությունը
տնտեսագիտական տեսանկյունից, բացահայտել տնտեսական
կառուցակարգի ձևավորման նախադրյալներն ու նախապատմությունը,
տարանջատել տնտեսական կառուցակարգի հիմնական տարրերն ու
տեսակները, ներկայացնել կառուցակարգին առաջադրված խնդիրներն ու
դրանց լուծման հնարավորությունները առանձնացված տարրերի օգնությամբ:

Աշխատանքը իրականացվել է այնպիսի մեթոդների կիրառությամբ,
ինչպիսիք են պատմական, վերացարկման, վերլուծության և համադրման,
գրաֆիկական պատկերման, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ
շուկայական տնտեսության պայմաններում շրջակա միջավայրի
պահպանության հարցում տնտեսական կառուցակարգը առանցքային
դերակատարում ունի: Տնտեսական կառուցակարգը միտված է լուծելու
շուկայի ձախողմամբ պայմանավորված էքստերնալների հիմնախնդիրը, որոնց
գոյությունը Էկոլոգիական խնդիրների առաջացման պատճառ է
հանդիսանում: Ուստի տնտեսական կառուցակարգի տարրերի համակարգված
և արդյունավետ գործարկման միջոցով հնարավոր է հասնել
Էկոլոգատնտեսական ցանկալի արդյունքների: Սակայն Հայաստանում գործող
շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգը
«փափուկ» բնույթի է, ինչը կայուն զարգացման և Էկոլոգիական
անվտանգության ապահովման տեսանկյունից արադարացված չէ, հետևապես
սույն ուսումնասիրության արդյունքները իրենց նպաստը կարող են բերել
ազգային կառուցակարգի կատարելագործման ու զարգացման գործին:

* Հոդվածը ներկայացվել է 19.04.2023թ., գրախոսվել՝ 05.06.2023թ., տպագրության
ընդունվել՝ 31.07.2023թ.:

Հիմնաբառեր՝ շրջակա միջավայր, մթնոլորտային օդ, էքստերնալներ, «Պիգուի հարկ», տնտեսական կառուցակարգ, վարչական կառուցակարգ, «Աղտոտողը վճարում է» սկզբունք, ֆինանսավորում, Էկոլոգիական գործոն:

Նախաբան

Տնտեսական զարգացմանը զուգահեռ՝ բնականաբար աճում է նաև շրջակա միջավայրի տարրերի, այդ թվում՝ մթնոլորտային օդի վրա անթրոպոգեն ազդեցությունը, ինչը բացասական հետևանքներ է թողնում մարդու, ինչպես նաև այլ կենդանի օրգանիզմների կենսաապահովման պայմանների վրա: Արդյունքում հանրային առողջության վատթարացումը, աշխատանքային արտադրողականության անկումը և, առհասարակ, շրջակա միջավայրի քայքայումը, եթե չեն արգելակում, ապա առնվազն դանդաղեցնում են տնտեսական աճը:

Շրջակա միջավայրի, այդ թվում՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում կիրառվող տնտեսական կառուցակարգը

Թերևս կարելի է ասել, որ մեր ժամանակների Էկոլոգիական հիմնախնդիրները առավելապես պայմանավորված են տնտեսագիտական մտքի հապաղմամբ: Ոչ տնտեսագիտության այնպիսի ականավոր դասականները, ինչպիսիք են Ա. Սմիթը, Դ. Ռիկկարդոն, ո՛չ Կ. Մարքսի, Ա. Մարշալի, Դ. Քեյնսի հետագա տնտեսագիտական դպրոցներն ու դրանց ներկայացուցիչները պատշաճ ուշադրություն չեն դարձրել տնտեսական աճի Էկոլոգիական սահմանափակումներին (Дмитриева и др 113), արդյունքում տնտեսական հսկայածավալ զարգացումը շարունակել է կրել տեխնածին (բնաքայքայող) բնույթ, քանի որ շուկան ինքնին ունակ չէ կանխարգելելու Էկոլոգիական խնդիրների առաջացումը՝ պայմանավորված շուկայի ձախողմամբ: Այսպիսով՝ շուկայի ձախողումները առանցքային տեղ են զբաղեցնում շրջակա միջավայրի տնտեսագիտության համար (Sandmo 5): Ընդհանուր առմամբ, շուկայի ձախողումը ազատ շուկայի կողմից ռեսուրսների արդյունավետորեն բաշխման ձախողումն է, որի պատճառ են անկատար մրցակցությունն ու անկատար տեղեկատվությունը, հանրային բարիքները և էքստերնալները (արտաքին էֆեկտները) (Anderson 48): Հենց վերջիններս էլ առավելապես Էկոլոգիական խնդիրների ծագման պատճառ են:

Ըստ Էռլայան՝ էքստերնալները լինում են դրական կամ բացասական, սակայն Էկոլոգիական տեսանկյունից առավել մեծ ուշադրություն է հատկացվում բացասական էքստերնալներին: Շրջակա միջավայրի, այդ թվում և մթնոլորտային օդի աղտոտումը, անշուշտ, բացասական էքստերնալ է: Որպես բացասական էքստերնալների հետևանք՝ արտադրության սահմանային մասնավոր ծախսերը ավելի ցածր են ստացվում, քան սահմանային սոցիալական ծախսերը, ինչն էլ առաջացնում է արտաքին ծախսերի ինտերնալիզացիայի անհրաժեշտություն: Բովանդակային առումով արտաքին ծախսերի ինտերնալիզացիան իրենից ներկայացնում է արտաքին ծախսերը ներքին ծախսերի վերածման գործընթաց:

Էքստերնալների և դրանց ինտերնալիզացիայի հետ կապված խնդիրները առաջին անգամ ուսումնասիրվել են Ա. Պիգուի կողմից «Բարեկեցության տնտեսագիտություն» աշխատությունում (Pigou 149-180): Արձանագրելով սահմանային մասնավոր ծախսերի և սահմանային սոցիալական ծախսերի միջև եղած տարբերությունը՝ Պիգուն դրանց հավասերացման նպատակով առաջարկում էր սահմանել հատուկ հարկ, որը համարժեք կլինի սահմանային բացասական էքստերնալ ծախսերին: Գիտական գրականության մեջ այդօրինակ հարկը ստացել է «Պիգուի հարկ» անվանումը:

Ինչպես հայտնի է, հարկեր սահմանելու բացառիկ դերը պատկանում է պետությանը, ինչն էլ, իր հերթին, ընդգծում է պետության դերն ու նշանակությունը

շրջակա միջավայրի պահպանության կառավարման, հետևապես նաև Էկոլոգիական անվտանգության ապահովման հարցում:


Ընդհանրապես պետության կողմից շրջակա միջավայրի պահպանության կառավարումը իրականացվում է այնպիսի կառուցակարգերի միջոցով, որոնք, ըստ էության, կարելի է տարանջատել վարչականի և տնտեսականի: Ուսումնասիրելով շրջակա միջավայրի պահպանության տնտեսագիտության, մասնավորապես՝ շրջակա միջավայրի պահպանության կառավարման ու տնտեսական կառուցակարգի վերաբերյալ ուսումնասիրություններ ներառող մի շարք հեղինակավոր աշխատություններ, այդ թվում՝ Օ. Ս. Շիմովայի և Ն. Կ. Սոկոլովսկու «Բնօգտագործման տնտեսագիտությունը», Դ. Ա. Անդերսոնի «Շրջակա միջավայրի տնտեսագիտություն և բնական ռեսուրսների կառավարումը», Ս. Ն. Բորևի և Ա. Շ. Խոջայևի «Բնօգտագործման տնտեսագիտությունը», Թ. Պանայոտովի «Շրջակա միջավայրի կառավարման և կայուն զարգացման տնտեսական գործիքները», Ս. Վ. Մակարի «Բնօգտագործման տնտեսագիտությունը», Վ. Ի. Կարակեյանի «Բնօգտագործման տնտեսագիտությունը», Կ. Վ. Պապենովի «Բնօգտագործման տնտեսագիտությունը», Ս. Սմիթի «Շրջակա միջավայրի տնտեսագիտությունը» (Anderson 448; Panaiotov 72; Smith 136; Бобылев и Ходжаев 567; Каракеян 576; Макаp 208; Папенова 928; Шимова и Соколовский 272), ինչպես նաև բազում գիտական հոդվածներ՝ կարելի է պատկերել շրջակա միջավայրի պահպանության կառավարման համակարգի հիմնական կառուցվածքն ու տարրերը (տե՛ս Գծապատկեր 1):

Այսպիսով՝ թե՛ վարչական, թե՛ տնտեսական կառուցակարգի տարրերը գտնվում են փոխադարձ կապվածության մեջ և գործնականում հաճախ համատեղվում են: Կարելի է ասել՝ վարչական կառուցակարգը իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի պահպանության կառավարման ուղղակի կարգավորման եղանակ, իսկ տնտեսական կառուցակարգը՝ անուղղակի: Ուշագրավ է տնտեսագետների պնդումը, համաձայն որի՝ տնտեսական գործիքները կարող են ստեղծել աղտոտման նվազեցման այնպիսի համակարգ, որը կապահովի շրջակա միջավայրի պաշտպանության նույն մակարդակը ավելի ցածր ծախսերով (Austin 3): Դա թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ ուղղակի կարգավորման մեթոդները սահմանափակում են աղտոտողների՝ Էկոլոգիական նպատակներին հասնելու ընտրության հնարավորությունը և բարձրացնում աղտոտման կառավարման ծախսերը, մինչդեռ շուկան կարող է արդյունավետորեն բաշխել արտանետումների կրճատման պարտավորությունները (Crandall):

Սակայն հարկավոր է ընդգծել, որ շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգը հիմնվում է վարչական կառուցակարգի վրա և ինքնուրույն գոյություն ունենալու արդյունավետորեն գործել չի կարող, այլապես կարող է վերածվել մի կառուցակարգի, որը թույլ է տալիս վճարի դիմաց քայքայել շրջակա միջավայրը:

Ընդհանրապես շրջակա միջավայրի պահպանության գործում տնտեսական մեթոդների կիրառման որպես առաջին մոտեցում կարելի է դիտարկել 1968 թ. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունված օդի աղտոտման վերահսկման «Սկզբունքների հռչակագրի» շրջանակներում «Աղտոտողը վճարում է» սկզբունքի ձևավորումը (Declaration of Principles on air pollution control): Մասնավորապես հռչակագրի 6-րդ սկզբունքը պնդում է՝ աղտոտման կանխարգելման կամ նվազեցման ծախսերը պետք է կրի աղտոտում առաջացնողը, ինչը սակայն չի բացառում օժանդակությունը պետական մարմինների կողմից: Այսօրինակ կարգավորումը, կարելի է ասել, հեղափոխական քայլ էր շրջակա միջավայրի պահպանության կառավարման համակարգում: Հետագայում «Աղտոտողը վճարում է» սկզբունքը տեղ գտավ նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) 1972 թ. «Խորհրդի կողմից շրջակա միջավայրի

քաղաքականության միջազգային տնտեսական հայեցակետերի վերաբերյալ առաջնային սկզբունքների առաջարկություն» փաստաթղթում (OECD, “Recommendation of the Council on Guiding Principles concerning International Economic Aspects of Environmental Policies”), որը, ըստ էության, «Աղտոտողը վճարում է» սկզբունքը ներառող առաջին միջազգային փաստաթուղթն է:



Գծապատկեր 1. Շրջակա միջավայրի պահպանության կառավարման համակարգի տարրերը

Ուշագրավ է նաև, որ դիտարկվող ժամանակշրջանում մարդկությունը սկսեց առավել մեծ ուշադրություն դարձնել Էկոլոգիական խնդիրներին ու հասարակական զարգացման միտումներին և գիտակցեց զարգացման ձևափոխման անհրաժեշտությունը, մասնավորապես 1972 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի աշխատանքները հարցադրում արեցին առ այս՝ արդյո՞ք առաջիկա ժամանակներում «աճի սահմանները» հասանելի են, ինչի արդյունքում եզրահանգեցին, որ զարգացման գոյություն ունեցող միտումների պահպանման պարագայում մարդկության ապագան խիստ վտանգաված է, հետևապես հասարակության վարքագծի արմատական փոփոխությունը ժամանակի հրամայականն է (Meadows and the Club of Rome 211): Նաև հենց այս ժամանակներում 1970-ական թթ.-ի սկզբին, ձևակերպվեց «կայուն զարգացում» եզրույթը (Pisani 91-92), որը լայն տարածում գտավ 1980 թթ., մասնավորապես՝ Բրուքստոնի հանձնաժողովի կողմից կազմված «Մեր ընդհանուր ապագան» հանրահայտ գեկոյցի շնորհիվ (Harlem Brundtland): «Կայուն զարգացման»

համատեքստում ևս լուրջ մտահոգություններ էին արտահայտվում Էկոլոգիական խնդիրների և, ընդհանրապես, մարդկության ապագայի վերաբերյալ:

Այսպիսով՝ 1970 թվականը, երբ առաջին քայլերն էին արվում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում տնտեսական գործիքների կիրառման ուղղությամբ, և գնեթացվում էր զգալի ուշադրություն Էկոլոգիական խնդիրների հանդեպ գիտական համայնքի կողմից, կարելի է համարել որպես շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի ձևավորման ժամանակաշրջան, սակայն հարկ է ընդգծել, որ շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգ վերջնական տեսքով գոյություն չունի, և դա գտնվում է կատարելագործման ու զարգացման անընդհատ գործընթացում: Այդուհանդերձ, գիտական գրականությունում առկա են շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի մի շարք սահմանումներ, մասնավորապես՝ ըստ ոլորտի անվանի գիտնականներից Շիմովայի և Սոկոլովսկու՝ շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգը կառավարման տնտեսական մեթոդների ամբողջությունն է, որը բնօգտագործողների մոտ բնական միջավայրի հետ փոխազդեցության օպտիմալացման կյուբական հետաքրքրությունն է ստեղծում (Шимова и Соколовский 170): Հայ փորձառու գիտնականների մի խումբ էլ շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգը սահմանում է որպես խրախուսական և հարկադրական բնույթի տնտեսական գործիքների համակարգ, որոնց օգտագործումը բնության պահպանության կառավարման ոլորտում ապահովում է Էկոլոգիական քաղաքականության նպատակների հաղթահարում (Գևորգյան և ուրիշներ 7):

Ամփոփելով շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի վերոբերյալ, ինչպես նաև մի շարք այլ սահմանումներ ու մեկնաբանություններ՝ կարելի է ասել՝ շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգը իրենից ներկայացնում է տնտեսական ձևերի և մեթոդների ամբողջություն, որը, տնտեսավարող սուբյեկտների մոտ տնտեսական շահագրգռվածություն ստեղծելով, նպատակաուղղված է Էկոլոգիական անվտանգության համատեքստում հասարակության տնտեսական և Էկոլոգիական շահերի ներդաշնակեցմանը:

Ինչ վերաբերում է մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգին, պետք է նշել, որ դա բովանդակային առումով նույնությամբ համապատասխանում է շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգին, պարզապես այս պարագայում տնտեսական կառուցակարգը սահմանափակվում է շրջակա միջավայրի միայն մեկ տարրով՝ մթնոլորտային օդով, ուստի մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգը կարելի է սահմանել որպես տնտեսական ձևերի և մեթոդների ամբողջություն, որը, տնտեսավարող սուբյեկտների մոտ տնտեսական շահագրգռվածություն ստեղծելով, նպատակաուղղված է հանրային առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովմանը:

Համաձայն գիտական գրականության՝ կարելի է առանձնացնել շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի երեք տեսակ (Макар 151-152) (տե՛ս Գծապատկեր 2):

Ակնհայտ է՝ տնտեսական զարգացման Էկոլոգիացման տեսանկյունից առավել արդյունավետ է խթանող և «կոշտ» կառուցակարգերի զուգակցումը: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի վերոնշյալ երեք տեսակներից առաջինը առավելապես բնորոշ է տնտեսապես զարգացող, իսկ վերջին երկուսը համատեղ կերպով՝ տնտեսապես զարգացած երկրներին:

«Փափուկ» կառուցակարգ	• գործնականում ոչ թե արգելակում, այլ թույլ ազդեցություն է ունենում շրջակա միջավայրը քայքայող գործունեության վրա: Այսօրինակ տնտեսական կառուցակարգը առավելապես ուղղված է բացասական էկոլոգիական հետևանքների վերացմանը, այլ ոչ թե դրանց առաջացման պատճառների:
խթանող կառուցակարգ	• ուղղված է բնապահպանական միջոցառումներ իրականացնելու գրավչության բարձրացմանն ու էկոլոգիապես անվտանգ գործունեության զարգացմանը: Նման կառուցակարգում առանցքային տեղ ունեն խթանող գործիքները, որոնք, տնտեսապես շահավետ դարձնելով ռեսուրսախնայող և սակավաթափոն նորագույն տեխնոլոգիաների կիրառությունը, նվազեցնում են շրջակա միջավայրի վրա անթրոպոգեն ազդեցությունը:
«Կոշտ» կառուցակարգ	• առաջնային կարևորություն տալով էկոլոգիական կայունությանը, տնտեսական կոշտ գործիքակազմի կիրառությամբ գործնականում ճնշում, ընդհուպ մինչև արգելակում է էկոլոգիապես անընդունելի տնտեսական գործունեությունը:

Գծապատկեր 2. Շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի տեսակները

Ինչ վերաբերում է շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի առջև դրված խնդիրներին, կարելի է ձևակերպել հետևյալ հիմնական խնդիրները.

- շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցում և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործում ու վերարտադրություն ապահովող տնտեսական միջավայրի ձևավորում,
- շրջակա միջավայրի վրա անթրոպոգեն ներգործության հետևանքով մարդկանց առողջությանը և շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատուցում,
- բնապահպանական միջոցառումների իրականացման համար ֆինանսական միջոցների կուտակում:

Վերոբերյալ խնդիրների լուծման վերջնանպատակը, իհարկե, հասարակության տնտեսական և էկոլոգիական շահերի ներդաշնակեցումն է, հետևաբար և կայուն զարգացման ապահովումը:

Ինչպես արդեն ներկայացվել է (տե՛ս Գծապատկեր 1), բնապահպանական միջոցառումների ֆինանսավորումը շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի կարևորագույն տարրերից մեկն է:

Ընդհանրապես մինչև շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի ձևավորումը Էկոլոգիական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները ֆինանսավորվում էին բացառապես պետական կամ, ասել է թե, հանրային միջոցների հաշվին, սակայն իրավիճակը սկսեց փոխվել, երբ 1970 թ. կիրառություն ստացավ «Աղտոտողը վճարում է» սկզբունքը: Ներկայումս կարելի է առանձնացնել բնապահպանական միջոցառումների ֆինանսավորման հետևյալ աղբյուրները.

- պետական բյուջե,
- Էկոլոգիական ֆոնդեր,
- տնտեսավարող սուբյեկտների սեփական միջոցներ,
- միջազգային ֆինանսական հատկացումներ և այլն:

Ուշագրավ է, որ համաձայն ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (անգլ. United Nations Environment Programme) շրջանակներում կատարված ուսումնասիրության՝ գլոբալ մակարդակով առաջադրված Էկոլոգիական նպատակներին հասնելու համար բնապահպանական միջոցառումների ֆինանսավորման տարեկան ծավալը 2020 թ. ցուցանիշի համեմատ մինչև 2030 թ. պետք է եռապատկվի, իսկ մինչև 2050 թ.՝ քառապատկվի՝ 133 միլիարդ ԱՄՆ դոլարից հասնելով շուրջ 536 միլիարդ ԱՄՆ դոլարի (United Nations Environment Programme 6): Ընդ որում՝ մտահոգիչ է այն հանգամանքը, որ ներկայումս ֆինանսավորման մեծ մասը՝ 86%-ը, բաժին է ընկնում պետական հատվածին՝ բազմակի գերազանցելով մասնավոր հատվածի ներգրավվածությունը (United Nations Environment Programme 6):

Այսուհանդերձ, բնապահպանական միջոցառումների ֆինանսավորման համակարգում իրենց ուրույն դերակատարությունն ունեն Էկոլոգիական ֆոնդերը: Այս ֆոնդերի գլխավոր առանձնահատկությունը այն է, որ մասնագիտացած են որոշակի Էկոլոգիական խնդիրների լուծման մեջ և հետևաբար առավել արդյունավետ են իրականացնում անհրաժեշտ բնապահպանական միջոցառումների ընտրությունն ու ֆինանսավորումը: Թերևս Էկոլոգիական ֆոնդի կիրառության լավագույն օրինակներից է ԱՄՆ «Սուպերֆոնդը» (անգլ. Comprehensive Environmental Response, Compensation and Liability Act)՝ հիմնադրված դեռևս 1980 թ. (“Superfund”. United States Environmental Protection Agency): Դա նպատակաուղղված է թունավոր թափոններով աղտոտված տարածքների վերականգնմանը, և միանգամայն ուշագրավ է, որ առհասարակ տարածքների վերականգնման միջոցառումների 70%-ի դեպքում վճարում են աղտոտողները (“Superfund”. National Geographic)՝ դրանով իսկ ապահովելով «աղտոտողը վճարում է» սկզբունքի իրացումը: Հատկանշական է, որ Հայաստանում գործում է ԱՄՆ «Սուպերֆոնդի» ազգային տարբերակը՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագուլիսը, որի նպատակային արդյունավետությունը, ցավոք, ցածր մակարդակի վրա է գտնվում (Աֆյան և Գասպարյան 164-170):

Միջազգային փորձից կարելի է առանձնացնել նաև Եվրոպայում 1992 թ.-ից գործող «Կյանքի» ծրագիրը (անգլ. LIFE programme), որը իրենից ներկայացնում է Եվրոպայի Էկոլոգիական քաղաքականության իրականացմանը միտված ծրագրերի ֆինանսավորման ֆոնդ: Հատկանշական է՝ ծրագրի շրջանակներում ֆինանսավորման ծավալները 2021-2027 թթ. կհասնեն շուրջ 5.4 միլիարդ եվրոյի (“LIFE - History of LIFE”):

1980 թթ. Էկոլոգիական ֆոնդեր են ձևավորվել նաև խորհրդային գրեթե բոլոր երկրներում՝ բացառությամբ Հայաստանի, Վրաստանի և Տաջիկստանի, սակայն դրանցից շատերը այժմ չեն գործում և արտաբյուջետայինից վերածվելով բյուջետայինի՝ պահպանվել են Ղրղզստանում, Մոլդովայում և Ուզբեկստանում, ինչը պայմանավորված է պետական միջոցների կառավարման արդյունավետության և թափանցիկության բարձրացման ճնշումներով (OECD. A focus on finance for green growth in EECCA, in Green Economy Transition in Eastern Europe, the Caucasus and

Central Asia: Progress and Ways Forward 8-9): Ներկայումս այդ տարածաշրջանում դիտվում է, այսպես ասած, «նոր» Էկոլոգիական ֆոնդերի ձևավորման միտում, մասնավորապես՝ 2006 թ.-ից Հայաստանում գործում է վերականգնվող ռեսուրսների և Էներգահիմնադրության հիմնադրամը, 2010 թ.-ից՝ Կրաստանի Էներգետիկայի զարգացման ֆոնդը, 2018 թ.-ից՝ Ուկրաինայի Էներգաարդյունավետության ֆոնդը (OECD. A focus on finance for green growth in EECCA, in Green Economy Transition in Eastern Europe, the Caucasus and Central Asia: Progress and Ways Forward 11):

Էկոլոգիական ֆոնդերից զատ բնապահպանական միջոցառումների ֆինանսավորման համակարգում առանձնահատուկ նշանակություն ունի Նաև Էկոլոգիական ապահովագրությունը, որը ապահովում է անսպասելի (վթարային) արտանետումների հետևանքով առաջացած կորուստների կամ վնասների ծածկում (փոխհատուցում) (“ENVIRONMENTAL INSURANCE”): Առհասարակ Էկոլոգիական ապահովագրության շրջանակներում կարող են փոխհատուցվել ինչպես շրջակա միջավայրը աղտոտած սուբյեկտի կրած, այնպես էլ աղտոտման հետևանքով երրորդ կողմին հասցված վնասները: Սովորաբար այդպիսի կորուստներ ու վնասներ են շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու գույքի վերականգման ծախսերը, աղտոտած սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեության ընդհատման արդյունքում առաջացած կորուստները:

Ընդհանրապես վթարային արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին, բնակչությանը և տնտեսությանը հասցված տնտեսական վնասը զգալի չափերի է հասնում: Այսօրինակ վնասի բաժինը շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով առաջացող վնասի ընդհանուր ծավալի մեջ հասնում է 25-30%-ի (Шимова и Соколовский 210): Զարգացած երկրներում այս տեսակ վնասի փոխհատուցումը իրականացվում է առաջին հերթին աղտոտող սուբյեկտի կողմից մեծամասամբ Էկոլոգիական ապահովագրության միջոցով, իսկ վնասի ահռելի չափսերի դեպքում հնարավոր է նաև միջամտություն պետության կողմից: Համաձայն փորձագիտական գնահատականների՝ Էկոլոգիական ապահովագրության կիրառումը հնարավորություն է տալիս փոխհատուցել վթարների արդյունքում երրորդ անձանց հասցված վնասի 2/5-ը (Папенова 282):

Սակայն Էկոլոգիական ապահովագրության դերը շրջակա միջավայրի պահպանության հարցում չի սահմանափակվում պարզապես ի հայտ եկած ծախսերի ֆինանսավորմամբ, այն նաև խթան է գործունեության Էկոլոգիական ռիսկերի նվազեցման համար՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տնտեսավարող սուբյեկտը Էկոլոգիական ապահովագրություն ստանալու համար պետք է համապատասխանի ապահովագրական ընկերության սահմանած Էկոլոգիական չափանիշներին, սրանից զատ Էկոլոգիական ռիսկերի նվազմանը զուգահեռաբար նաև նվազում են ապահովագրական վճարները: Իսկ ուսումնասիրությունները փաստում են, որ ապահովագրական վճարի նվազեցումները գործնականում ավելացնում են Էկոլոգիական ռիսկերի կրճատմանն ուղղված ներդրումները (Mol et al 37):

Հատկանշական է՝ Էկոլոգիական ապահովագրության համակարգը առավել կայացած է ԱՄՆ-ում, ինչը պայմանավորված է դեռևս 1980 թ. Էկոլոգիական պատասխանատվության օրենսդրության ձևավորմամբ, ինչն էլ առաջացրել է Էկոլոգիական ապահովագրության ձևավորման անհրաժեշտություն (OECD. Liability for environmental damage in Eastern Europe, Caucasus and Central Asia (EECCA): implementation of good international practices 25): Եվրոպական երկրներում Էկոլոգիական ապահովագրությունը սկսել է զարգանալ 2004 թ. սկսած՝ պայմանավորված 2004 թ. «Շրջակա միջավայրի պատասխանատվության հրահանգի» (անգլ. Environmental Liability Directive 2004/35/EC) ընդունմամբ, որի 14-րդ հոդվածը վերաբերում է անդամ պետություններում տնտեսավարող սուբյեկտների՝ շրջակա միջավայրի հանդեպ ունեցած պարտավորությունների կատարման համար

Ֆինանսական երաշխիքների ստեղծմանը (The European Parliament and the Council of the European Union): Էկոլոգիական ապահովագրությունը որոշակի կիրառություն է ստացել նաև Ռուսաստանում, սակայն դրա կիրառման մասշտաբներն ու արդյունավետությունը դեռևս ցածր մակարդակի վրա են գտնվում (Boltanova and Kratenko 7-27): Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա պետք է նշել՝ Էկոլոգիական ապահովագրությունը այստեղ դեռևս կիրառություն չի ստացել, իսկ ձևավորման նախադրյալներ առայժմ նկատելի չեն:

Շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգում առանցքային դերակատարում ունի նաև բնօգտագործման վճարովիությունը: Վճարովիության գաղափարը իրենից ենթադրում է բնական ռեսուրսների օգտագործման համար վճարի սահմանում, որի նպատակը պետության սեփականության օգտագործման փոխհատուցումն ու այդ ռեսուրսի վերականգնման և պահպանման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների կուտակումն է: Կարելի է ասել՝ բնական ռեսուրսների օգտագործման համար վճարի հիմքում ընկած է «օգտագործողը վճարում է» սկզբունքը: Բնօգտագործման վճարովիությունը ենթադրում է նաև շրջակա միջավայրի աղտոտման համար վճարների կամ հարկերի սահմանում՝ հիմքում ունենալով «աղտոտողը վճարում է» սկզբունքը: Այս դեպքում, ըստ Էոլթյան, բնական ռեսուրսի դերում հանդես է գալիս շրջակա միջավայրի ասիմիլացիոն ներուժը, որը իրենից ներկայացնում է Էկոհամակարգի կողմից նյութերի կլանման ունակություն առանց Էկոհամակարգի քայքայման ու ամբողջականության խախտման (Cairns 17): Տեղին է նշել՝ Հայաստանում բնօգտագործման վճարովիության սկզբունքի իրացումը ապահովվում է բնօգտագործման վճարների և բնապահպանական հարկերի համակարգի միջոցով:

Ոչ վաղ անցյալում, երբ բնական ռեսուրսները ընկալվում էին որպես բնության անվճար բարիք, իսկ շրջակա միջավայրի ասիմիլացիոն ներուժը՝ անսահմանափակ, բնօգտագործման վճարովիության բացակայության պայմաններում շրջակա միջավայրը ենթարկվել է գերծանրաբեռնվածության ու քայքայման: Այս խնդրի լուծմանն ուղղված լինելով՝ վճարների և հարկերի սահմանումը խթան է հանդիսանում բնական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման և շրջակա միջավայր արտանետումների կրճատման համար՝ միևնույն ժամանակ ֆինանսական միջոցներ հավաքագրելով բնապահպանական միջոցառումների իրականացման համար:

Վճարովիությունից զատ՝ բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հարցում կարևոր նշանակություն ունի նաև բնական ռեսուրսների շուկաների ստեղծումը: Շուկայի առանձնահատկությունը այն է, որ ռեսուրսների սակավության պայմաններում գնային ազդանշանների շնորհիվ ապահովվում է դրանց առավել արդյունավետ օգտագործումը: Բնական ռեսուրսների պաշարների սպառմանը զուգահեռ դրանց գների աճը սպառողներին ստիպում է առավել խնայողաբար օգտագործել դրանք կամ փնտրել այլընտրանքային տարբերակներ: Սակայն պետք է նշել, որ շուկայի պարագայում հնարավոր է գնահատել շրջակա միջավայրի միայն մեկ գործառույթ՝ բնական ռեսուրսներով ապահովումը, իսկ մյուս երկու կարևոր գործառույթները՝ ասիմիլացիան և բնական ծառայություններով ապահովումը, համապատասխան գնահատական չեն ստանում: Արդյունքում բնական ռեսուրսների՝ շուկայում ձևավորված գները չեն արտացոլում բնական ռեսուրսների Էկոլոգատնտեսական արժեքը: Այսուհանդերձ, բնական ռեսուրսների շուկաներ են ձևավորվել հիմնականում վառելիքաէներգետիկ և մետաղական ռեսուրսների համար, իսկ բազմաթիվ բնական ռեսուրսների, այդ թվում՝ մթնոլորտային օդի դեպքում այդպիսիք բացակայում են:

Թերևս դժվար է պատկերացնել մթնոլորտային օդի պարագայում շուկայի ստեղծումը կամ դրա օգտագործման համար վճարի սահմանումը, ինչը պայմանավորված է մթնոլորտային բարդություններով և ինչ-որ տեղ մթնոլորտային օդի վերաբերյալ հանրային ընկալումներով: Ընհանուր առմամբ, մթնոլորտային օդի

օգտագործումը կարգավորվում է շրջակա միջավայրի պահպանության վարչական կառուցակարգի միջոցով, իսկ տնտեսական կառուցակարգը կիրառվում է մթնոլորտային օդի աղտոտման կանխման ու պահպանության շրջանակներում: Սակայն բնական ռեսուրսների վճարովիությունն ու շուկաների ստեղծումը, բարենպաստ տնտեսական պայմաններ ստեղծելով բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու վերարտադրության ապահովման համար, նպաստում են Էկոհամակարգի կայունության պահպանմանը, ինչն էլ, իր հերթին, դրական ազդեցություն է ունենում մթնոլորտային օդի որակի վրա:

Այսպիսով՝ ակնհայտ է՝ Էկոլոգիական գործոնի հաշվառումը գնագոյացման ժամանակ առանցքային դերակատարություն ունի շրջակա միջավայրի պահպանության հարցում: Բնական ռեսուրսների՝ առանց Էկոլոգիական գործոնի հաշվառման ցածր գներն ու շրջակա միջավայրի աղտոտմամբ հասցված վնասի ոչ պատշաճ հաշվառումը գնագոյացման գործընթացում չեն խթանում գիտատեխնիկական առաջընթացի օգտագործումն ու ռեսուրսախնայող, սակավաթափոն տեխնոլոգիաների կիրառումը:

Ընդհանուր առմամբ, Էկոլոգիապես անվտանգ գործունեության խրախուսումը Էկոլոգիական հարկերի ու վճարների կիրառումից զատ, որոնք, ըստ Էոլթյան, հարկադրական բնույթի գործիքներ են, իրականացվում է նաև խթանող և շուկայական բնույթի գործիքների միջոցով, ինչպիսիք են՝ հարկային արտոնությունների և սուբսիդիաների տրամադրումը, արագացված ամորտիզացիոն հատկացումների թույլատրումը, աղտոտման թույլտվությունների առքուվաճառքի համակարգը և այլն:

Այսպիսով՝ ամփոփելով սույն ուսումնասիրության արդյունքները և համադրելով դրանք Հայաստանում շրջակա միջավայրի, այդ թվում՝ մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի վերաբերյալ ուսումնասիրությունների, այդ թվում՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» (Գևորգյան և ուրիշներ 60), «Հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման հեռանկարները Հայաստանում: SWOT վերլուծություն» (Աֆյան և Գասպարյան 164-170), «Մթնոլորտային օդի որակի պահպանությանն ուղղված տնտեսական կառուցակարգը ՀՀ-ում» (Գասպարյան 132-145) հետազոտությունների արդյունքների հետ՝ կարելի է նշել, որ դիտարկվող կառուցակարգի հայկական մոդելը առավելապես «փափուկ» բնույթի է, չի խթանում մթնոլորտային օդ արտանետումների կրճատումը և բավարար արդյունավետ չէ ազգային Էկոլոգիական անվտանգության ապահովման տեսանկյունից: Ուստի իրականացված ուսումնասիրության արդյունքները կարող են ելակետային հիմք հանդիսանալ Հայաստանում մթնոլորտային օդի կամ ընդհանրապես շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի, դրա կատարելագործման ու զարգացման վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման համար:

Եզրակացություն

Ամփոփելով կարելի է ասել՝ շուկայական հարաբերությունների պայմաններում անհնար է պատկերացնել շրջակա միջավայրի, այդ թվում՝ մթնոլորտային օդի պահպանությունն առանց տնտեսական լծակների կիրառման, ինչը պայմանավորված է շուկայի ձախողմամբ, մասնավորապես՝ Էքստերնալների առաջացմամբ: Էքստերնալների ինտերնալիզացիայի անհրաժեշտությունն էլ շրջակա միջավայրի պահպանության բնագավառում տնտեսական կառուցակարգի ձևավորման շարժառիթ է հանդիսացել: Սակայն պետք է ընդգծել, որ տնտեսական կառուցակարգը արդյունավետորեն կարող է գործել վարչական կառուցակարգի հետ համատեղ: Ինչ վերաբերում է շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի

Եռթյանը, ապա դա ամբողջությամբ բացահայտում են կառուցակարգի հիմնական տարրերը:

Այսպիսով՝ ուսումնասիրության շրջանակներում ստացված արդյունքները, մասնավորապես՝ վարչական և տնտեսական կառուցակարգի տարրերի հստակ տարանջատումը, մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի սահմանումը, տնտեսական կառուցակարգի տեսակների տարբերակումը, առաջադրվող խնդիրների ձևակերպումն ու տարրերի բովանդակային վերլուծությունը ելակետային հիմք են ստեղծում Հայաստանում մթնոլորտային օդի պահպանության գործող տնտեսական կառուցակարգի կառուցվածքի, արդյունավետության և կատարելագործման վերաբերյալ հետագա հետազոտությունների իրականացման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աֆյան, Նադեժդա և Գասպարյան, Գարրի. «Հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման հեռանկարները Հայաստանում: SWOT վերլուծություն».
Գիտական Արցախ, № 1(8), 2021, էջ 164-170, DOI: 10.52063/25792652-2021.1-164, <https://scientificartsakh.com/> :
2. Գասպարյան, Գարրի. «Մթնոլորտային օդի որակի պահպանությանն ուղղված տնտեսական կառուցակարգը ՀՀ-ում».
ԲԱՆԲԵՐ ՀԴՏՀ, № 2, 2022, էջ 132-145, DOI: 10.52174/1829-0280_2022.2-132:
3. Գևորգյան, Մուրեն և ուրիշներ. *Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում*. Տնտեսագետ հրատարակչություն, Երևան, 2014, 60 էջ:
4. Anderson, David. *Environmental economics and natural resource management*. 4rd ed., Routledge, England, 2013, 448 p..
5. Austin, Duncan. *Economic Instruments for Pollution Control and Prevention – a Brief Overview*. World Resources Institute, 1999, 11 p..
6. Boltanova, Elena and Kratenko, Maxim. "The Specific Nature of Environmental Damage and the 'Conventionality' of its Assessment as Factors Hindering the Development of Environmental Insurance in the Russian Federation". *Asia Pacific Journal of Environmental Law*, Vol. 25 No. 1, 2022, pp. 7–27, DOI: <https://doi.org/10.4337/apjel.2022.01.01> .
7. Cairns Jr, John. *Goals and Conditions for a Sustainable World*. Inter-Research, Germany, 2002. 309p..
8. Crandall, Robert. "Pollution Controls". The Library of Economics and Liberty, <https://www.econlib.org/library/Enc/PollutionControls.html>, Accessed: 16 Apr 2023.
9. Du Pisani, Jacobus. "Sustainable Development – Historical Roots of the Concept", *Environmental Sciences*, N3:2, 2006, p. 83-96, DOI: 10.1080/15693430600688831.
10. "ENVIRONMENTAL INSURANCE". National Association of Insurance Commissioners, <https://content.naic.org/cipr-topics/environmental-insurance> . Accessed: 16 Apr 2023.
11. Harlem Brundtland, Gro. *Our Common Future: Report of the World Commission on Environment and Development*. Geneva, 1987. UN-Dokument A/42/427.
12. "LIFE - History of LIFE". European Commission, <https://wayback.archive-it.org/12090/20210412134647/https://ec.europa.eu/easme/en/section/life/life-history-life> , Accessed: 16 Apr 2023.
13. Meadows, Donella and the Club of Rome. *The Limits to Growth; a Report for the Club of Rome's Project on the Predicament of Mankind*. Universe Books, New York,

- 1972, 211p.. <http://www.donellameadows.org/wp-content/userfiles/Limits-to-Growth-digital-scan-version.pdf> .
14. Mol, Jantsje et al. "Risk Reduction in Compulsory Disaster Insurance: Experimental Evidence on Moral Hazard and Financial Incentives". *Journal of Behavioral and Experimental Economics*, Volume 84, 2019, 37p., doi: <https://doi.org/10.1016/j.socec.2019.101500> .
15. OECD. *A Focus on Finance for Green Growth in EECCA, in Green Economy Transition in Eastern Europe, the Caucasus and Central Asia: Progress and Ways Forward*. OECD Publishing, Paris, 2022, <https://doi.org/10.1787/7259dde4-en>. 22p..
16. ---. *Liability for Environmental Damage in Eastern Europe, Caucasus and Central Asia (EECCA): Implementation of Good International Practices*. 2012, 36p., <https://www.oecd.org/env/outreach/50244626.pdf> .
17. ---. "Recommendation of the Council on Guiding Principles concerning International Economic Aspects of Environmental Policies", 26 May 1972. <https://legalinstruments.oecd.org/en/instruments/OECD-LEGAL-0102>
18. Panaiotov, Theodore. *Economic Instruments for Environmental Management and Sustainable Development*. UNEP, Nairobi, 1994, 72p..
19. Pigou, Arthur. *The Economics of Welfare*. Macmillan, London, 1920, 976 p..
20. Sandmo, Agnar. *The Early History of Environmental Economics.*, NHH Dept. of Economics, Norway, 2014, 43 p., ISSN: 0804-6824, <https://openaccess.nhh.no/nhh-xmlui/bitstream/handle/11250/194577/SAM1014.pdf?sequence=1> .
21. Smith, Stephen. *Environmental Economics: A Very Short Introduction*. OUP Oxford, 2011, 136 p..
22. "Superfund". *National Geographic*, <https://education.nationalgeographic.org/resource/superfund/>, Accessed: 16 Apr 2023.
23. "Superfund". *United States Environmental Protection Agency*, <https://www.epa.gov/superfund/what-superfund> , Accessed: 16 Apr 2023.
24. The Committee of Ministers. Europe. "Declaration of Principles on Air Pollution Control", 8th March 1968. <https://rm.coe.int/16804faaea> .
25. The European Parliament and the Council of the European Union. "Directive 2004/35/CE of the European Parliament and of the Council of 21 April 2004 on environmental liability with regard to the prevention and remedying of environmental damage". 21 April 2004, <http://data.europa.eu/eli/dir/2004/35/2019-06-26> .
26. United Nations Environment Programme (UNEP). *State of Finance for Nature*. Nairobi, 2021, 65 p..
27. Бобылёв, Сергей и Ходжаев, Анатолий. *Экономика природопользования: учебник*. Москва, 2003, 567 с..
28. Дмитриева, Ольга и др. «Экономический механизм охраны окружающей среды». *Вестник Академии знаний*. №2 (25), 2018, с. 112-116, <https://cyberleninka.ru/article/n/ekonomicheskij-mehanizm-ohrany-okruzhayuschey-sredy-1> .
29. Каракеян, Валерий. *Экономика природопользования: учебник*. Издательство Юрайт, Москва, 2011, 576 с..
30. Макар, Светлана. *Экономика природопользования: конспект лекций - 2-е изд.*. Издательство Юрайт, Москва, 2011, 208 с.
31. Папенов, Константин. *Экономика природопользования: учебник*. 2010, 928 с.
32. Шимова, Ольга и Соколовский, Николай. *Экономика природопользования: учеб. пособие. - 2-е изд., испр.*. ИНФРА-М, Москва, 2014, 272 с.

WORKS CITED

1. Afyan, Nadejhda ev Gasparyan, Garri. «Hanqardyunaberut'yan olorti kayun zargacman her'ankarnery' Hayastanum: SWOT verluc'ut'yun». *Gitakan Arcax*, ["Prospects for Sustainable Development of the Mining Industry in Armenia. SWOT analysis". *Scientific Artsakh*] № 1(8), 2021, pp.164-170, DOI: 10.52063/25792652-2021.1-164, <https://scientificartsakh.com/>. (In Armenian).
2. Gasparyan, Garri. «Mt'holortayin o'di oraki pahpanut'yann ughghvac' tntesakan kar'ucakargy' HH-um». *BANBER HPTH*, ["Economic Mechanism of Atmospheric Air Protection in the Republic of Armenia". *Messenger of ASUE*] № 2, 2022, pp.132-145, DOI: 10.52174/1829-0280_2022.2-132. (In Armenian).
3. Gevorgyan, Suren ev urishner. *Bnapahpanakan ev bno'gtagorc'man vtwarneri oroshman met'odabanut'yan katarelagorc'man himnaxndirneri' HH-um*. Tntesaget hratarakchut'yun, Erevan, [*The Problems of Development of Determination Methodology of the Environmental Fees and Natural Resources Payments*, Yerevan] 2014, 60 p. (In Armenian).
4. Bobyl'ov, Sergej i Hodzhaev, Anatolij. *Jekonomika prirodopol'zovanija. Uchebnik*. Moskva, [*Economics of Environmental Management*. Moscow] 2003, 567 p.. (In Russian).
5. Dmitrieva, Ol'ga i dr. «Jekonomicheskij mehanizm ohrany okruzhajushhej sredy». *Vestnik Akademii znaniy*. [Economic Mechanism of Environmental Protection. *Messenger Academies of Knowledge*] №2 (25), 2018, pp. 112-116, <https://cyberleninka.ru/article/n/ekonomicheskij-mehanizm-ohrany-okruzhajushhej-sredy-1> (In Russian).
6. Karakejan, Valerij. *Jekonomika prirodopol'zovanija: uchebnik*. Izdatel'stvo Jurajt, Moskva, [*Economics of Environmental Management*. Moscow] 2011, 576 p.. (In Russian).
7. Makar, Svetlana. *Jekonomika prirodopol'zovanija: konspekt lekcij - 2-e izd..* Izdatel'stvo Jurajt, Moskva, [*Economics of Environmental Management*. Moscow] 2011, 208 p.. (In Russian).
8. Papenov, Konstantin. *Jekonomika prirodopol'zovanija: Uchebnik*. [*Economics of Environmental Management*] 2010, 928 c.. (In Russian).
9. Shimova, Ol'ga i Sokolovskij, Nikolaj. *Jekonomika prirodopol'zovanija: Ucheb. posobie. - 2-e izd., ispr..* INFRA-M, Moskva, [*Economics of Environmental Management*. Moscow] 2014, 272 p.. (In Russian).

THEORETICAL AND METHODOLOGICAL FOUNDATIONS AND FEATURES OF THE ECONOMIC MECHANISM OF ENVIRONMENTAL PROTECTION

GARRI GASPARYAN

*Armenian State University of Economics,
Faculty of Regulation of Economy and International Economic Relations,
Chair of Environmental Economics, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to reveal the theoretical and methodological foundations and features of the economic mechanism used in the field of environmental protection, creating a scientific and informational basis for improving and developing the economic mechanism of the environment, in particular, atmospheric air protection in Armenia. In order to achieve the stated goal, the task was set to study the necessity of applying the economic mechanism in the field of environmental protection from an economic point of view, to identify the prerequisites and background of the formation of

the economic mechanism, to distinguish the main elements and types of the economic mechanism, to introduce the tasks of the mechanism and the possibilities of their realization with the help of separated elements.

The research was carried out using such methods as historical, abstractive, analytical and comparison, graphical representation, induction and deduction methods.

As a result of the conducted research, it can be concluded that in a market economy the economic mechanism plays a key role in environmental protection. The economic mechanism is aimed at solving the problem of externalities caused by the market failure, the existence of which is the reason of ecological problems. Consequently, through the systematic and effective use of the elements of the economic mechanism, it is possible to achieve the desired ecological and economic results. However, the economic mechanism of environmental protection in Armenia is of a "soft" nature, which is not justified from the point of view of ensuring sustainable development and ecological security, therefore, the results of this study can contribute to the improvement and development of the national mechanism.

Keywords: *environment, atmospheric air, externalities, Pigou's tax, economic mechanism, administrative mechanism, "Polluter pays" principle, financing, ecological factor.*

ТЕОРЕТИЧЕСКИЕ И МЕТОДИЧЕСКИЕ ОСНОВЫ И ОСОБЕННОСТИ ЭКОНОМИЧЕСКОГО МЕХАНИЗМА ОХРАНЫ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

ГАРРИ ГАСПАРЯН

*аспирант кафедры экономики природопользования факультета
регулирования экономики и международных экономических отношений
Армянского государственного экономического университета
г. Ереван, Республика Армения*

В работе поставлена цель выявить теоретические основы и особенности экономического механизма, применяемого в сфере охраны окружающей среды, создав научно-информационную основу для совершенствования и развития экономического механизма окружающей среды, в частности, атмосферного воздуха в Армении.

Для достижения заявленной цели была поставлена задача изучить необходимость применения экономического механизма в области охраны окружающей среды с экономической точки зрения, выявить предпосылки и предысторию формирования экономического механизма, выделить основные элементы и типы экономического механизма, представить задачи, предъявляемые к механизму, и возможности их решения с помощью выделенных элементов.

Работа выполнена с использованием таких методов, как исторический, абстрактный, анализ и сравнение, графическое изображение, методы индукции и дедукции.

В результате исследования можно сделать вывод о том, что экономический механизм в условиях рыночной экономики играет ключевую роль в охране окружающей среды. Экономический механизм направлен на решение проблем экстерналий, обусловленных провалом рынка, существование которых является причиной возникновения экологических проблем. Очевидно, что, посредством скоординированного и эффективного задействования элементов экономического механизма можно достичь желаемых эколого-экономических результатов. Однако

действующий в Армении экономический механизм охраны окружающей среды носит «мягкий» характер, что с точки зрения устойчивого развития и обеспечения экологической безопасности не оправдано, следовательно, результаты данного исследования могут внести свой вклад в дело совершенствования и развития национального механизма.

Ключевые слова: *окружающая среда, атмосферный воздух, экстерналии, «налог Пигу», экономический механизм, административный механизм, принцип «загрязнитель платит», финансирование, экологический фактор.*